արել են։ Ցակամայ կամս դառնալով դէպ 'ի Տէր-Հօր, — « Լաւ չէ՞ր լինել, գրուցեցի որ այս խաչ-« կալը ոչ այդչափ բարձր լինէր, և փոխանակ այդոր՝ « սակաւ մի գիւղին ուսումնարանը ընդարձակ լի-« նէր, որով ուսանողք ոչ ապականեալ օդով չընչ-« չէին »։ Տէրտէրը համաձայն էր կարծեացս. այլ եղածը եղած էր։ Նուիրած է եկեղեցիս յանուն Ս. Սարգսի զօրավարին. բաց յայնմանէ՝ ջերմեռանդն ուխտաւորք Ս. Պարաքևեայ ևս մեծ յարգութիւն կ'ընծայեն այս տաճարիս մէջ, 'ի յիշատակ Ս. Ուրբաթ Ղրիմեցի եկեղեցւոյն, որ ցարդ կանգուն կեցած է Թոփլու կոչուած գիւղին՝ մի սարի վերայ։

Երկրորդ օրը Համբարձման տօնն էր, արևը դէպ 'ի մուտս կը խոնարհէր, հարկ էր մեզ փութալ 'ի Նախիջևան. թէպէտ և մնաց մի այլ գիւղ որոյ կարող չեղայ յայց ելնելու, այն է Փոքր կամ Սուլթան Սալա կոչուածը, այլ մեծերէն կարելի էր գուշակել և փոքրին ինչ լինելը։ Լսեցի որ այն գիւղին նորաշէն եկեղեցին նուիրեալ է յանուն Ս. Գէորգայ զօրավարի, և ունի ուսումնարան մի 32 աշակերտով։

Ներկայ տարւոյս (1886) մի նոր գիւղ ևս ձևացուցել են Նախիջևանցիք քաղաքէն 12 վերստ հեռաւորութեամբ դէպ 'ի Թայղան գնացող ճանապարհին վրայ, որոյ Եկատերինովքա ռուսահնչիւն անուն տուած են։ Անչուշտ այդ նորաշէն և 'ի շարս Նախիջևանցի հայաբնակ գիւղերուն վեցերորդն՝ քան զհիները առաւել բարեձև կը լինի, այլ դեռ չունի ոչ եկեղեցի և ոչ ուսումնարան։

Թոփթիի անապատացեալ և անբոյս երևոյթն՝ տխուր հետք մի թողուց իմ երևակայութեանս վրայ. 'ի դարձիս ֆայետոնին մէջ լռիկ նստած